ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 42/5

28-ը դեկտեմբերի 2019 թվականի

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2014Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 7 ՆԻՍՏՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԱԾ «ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏԿԻՑՆԵՐԻՆ ԽՐԱԽՈՒՍԵԼՈՒ ԿԱՐԳ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի կանոնադրության 21-րդ կետի 4-րդ ենթակետով և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը»՝ համաձայն հավելված 5-ի:
2. Ուժը կորցրած ճանաչել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի 2014թ. դեկտեմբերի 25-ի թիվ 7 նիստում հաստատված «Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի աշխատկիցներին խրախուսելու կարգ սահմանելու մասին» կանոնակարգը
3. Սահմանել, որ սույն որոշմամբ հաստատված կարգի դրույթները տարածվում են 2019թ. սեպտեմբերի 1-ից հետո հրապարակված աշխատանքների վրա:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ԻՄ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ_____ Ա.Հ. ՄԱԿԱՐՅԱՆ

Հավելված 5

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի թիվ 42 նիստում (28-ը դեկտեմբերի, 2019 թ.)

ԵՊՀ ԻՄ-ի գիտական խորհրդի նախագահ_____Ա.Հ. Մակարյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կարգը սահմանում է «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) ֆակուլտետների, կենտրոնների (այսուհետ՝ ստորաբաժանում) աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների կատարման համար վճարվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգն ու պայմանները:

1.2. ԵՊՀ ԻՄ աշխատողներին լրավճարը վճարվում է գիտահետազոտական, ուսումնամեթոդական, կազմակերպչական աշխատանքների որոշ տեսակների կատարման համար՝ սույն կարգով սահմանված ընթացակարգով և չափերով:

1.3. Սույն կարգով սահմանված լրավճարներ ստանալու համար պահանջվող տվյալները դիտավորյալ կեղծելու դեպքում, տվյալ աշխատողը զրկվում է սույն կարգի համաձայն լրավճար ստանալու իրավունքից՝ 3 տարի ժամկետով:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. ԵՊՀ ԻՄ աշխատողներին գիտահետազոտական գործունեության որոշ տեսակների կատարման համար վճարվում են լրավճարներ՝ համաձայն Աղյուսակ 1-ի.

Աղյուսակ 1

Հ/Հ	ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔԻ) ՆԿԱՐԱԳԻՐԸ	ՄԻԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ (D-Ն) (ՀՀ ԴՐԱՄ)	ՄԵԿ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԼՐԱՎՃԱՐԻ ՉԱՓԸ ԵՎ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
1.	Հոդվածի տպագրում ազդեցության գործակցով գիտական պարբերականներում	150000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
2.	Հոդվածի տպագրում «Web of Science» (Science Citation Index Expanded, Social Sciences Citation Index, Arts & Humanities Citation Index, Emerging Sources Citation Index) կամ «Scopus» շտեմարան-ներում ընդգրկված գիտական պարբերականներում	75000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
3.	Հոդվածի տպագրում «Web of Science» Russian Science Citation Index) շտեմարաններում ընդգրկված գիտական պարբերականներում (բացառապես ոչ բնագիտական մասնագիտությունների	75000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին

	դեպքում)		
4.	Հոդվածի տպագրում «ԵՊՀ տեղեկագիր», «Բանբեր Երևանի համալսարանի» և «Հայա-գիտության հարցեր» գիտական պարբերականներում	60000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
5.	Հոդվածի տպագրում ՀՀ ԲՈԿ-ի կողմից երաշխավորված հայաստանյան գիտական պարբերականներում և «Ակունք» պարբերական գիտամեթոդական հրատարակությունում:	30000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
6.	Սույն Աղյուսակի 1-5 կետերից որևէ մեկի պահանջներին բավարարող հոդվածի տպագրում արտասահմանյան[1] համահեղինակ(ներ)ի հետ	Սույն Աղյուսակի 1-5 կետերից որևէ մեկով սահմանված գումարին ավելացվում է 20000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
7.	Հոդվածի տպագրում արտասահ-մանյան ԲՈՒՀ-ի կամ գիտահետազոտական ինստիտուտի գիտական պարբերականներում	30000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին

[1] Արտասահմանյան է համարվում այն համահեղինակը, որ որպես աշխատանքի վայր նշել է արտասահմանյան գիտակրթական կազմակերպություն:

8.	Մենագրության հրատարակում (ծավալը՝ առնվազն A5 ձևաչափով 120 էջ, երկու մասնագիտական գրախոսություն և համապատասխան ստորաբաժանման գիտական խորհրդի երաշխավորությունը որպես մենագրություն)	200000	D-ն բաժանած ՀՀ քաղաքացի համահեղինակների թվին
9.	Դոկտորական ատենախոսության պաշտպանություն	300000	D-ն վճարվում է դոկտորական ատենախոսություն պաշտպանող աշխատողին
10.	Պաշտպանությունից առաջ վերջին երկու տարում ԵՊՀ ԻՄ-ում առնվազն 20 ամիս աշխատած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության ղեկավարում	100000	D-ն վճարվում է հայցորդի (ասպիրանտի) ղեկավարին
11.	Պաշտպանությունից առաջ վերջին երկու տարում ԵՊՀ ԻՄ-ում առնվազն 20 ամիս աշխատող և 35 տարին չլրացած հայցորդի (ասպիրանտի) ատենախոսության պաշտպանություն	100000	D-ն վճարվում է թեկնածուական ատենախոսություն պաշտպանող աշխատողին
12.	Պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչման ստացում	100000	D-ն վճարվում է պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ստացած աշխատողին

2.2. Աղյուսակ 1-ի 1-7-րդ կետերով սահմանված գումարները վճարվում են ԵՊՀ ԻՄ այն աշխատողին, ով տպագրված հոդվածում որպես իր աշխատավայր նշել է ԵՊՀ ԻՄ-ը[2] և հնարավորության դեպքում նաև ysu.am համացանցային տիրույթում գրանցված իր էլեկտրոնային փոստի հասցեն:

2.3. Եթե հոդվածի հեղինակը որպես իր աշխատավայր նշել է մեկից ավելի կազմակերպություններ, ապա նրան վճարվում է հասանելիք գումարի կեսը:

2.4. Մի քանի կետերի համապատասխանող աշխատանքի համար հեղինակին վճարվում է գումարի առավելագույն չափ սահմանող կետով:

2.5. Աղյուսակ 1-ի 1-12-րդ կետերով սահմանված գումարները վճարվում են միայն ԵՊՀ ԻՄ հիմնական աշխատողներին:

2.6. Աղյուսակ 1-ում սահմանված աշխատանքների կատարման համար, ԵՊՀ ԻՄ աշխատողին վճարվող լրավճարի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը:

2.7. Աղյուսակ 1-ի 1-8-րդ կետերով սահմանված աշխատանքների համար լրավճարները վճարվում են, եթե այդ աշխատանքները մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 31-ը մուտքագրվել են ԵՊՀ ԻՄ աշխատողների հաշվետվությունների էլեկտրոնային շտեմարանում (www.intranet.ysu.am) (մինչև էլեկտրոնային շտեմարանի գործարկումը աշխատանքները ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղարին), իսկ 9-12-րդ կետերով սահմանված աշխատանքների համար՝ պահանջնող փաստաթղթերը մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 31-ը առձեռն ներկայացրել են ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղարին:

2.8. Աղյուսակ 1-ի 9-րդ, 11-րդ, 12-րդ կետերով սահմանված աշխատանքները հաշվառելու համար ԵՊՀ ԻՄ հիմնական աշխատողը ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղարին է ներկայացնում դիպլոմի կամ վկայականի պատճենը:

[2] Եթե տվյալ գիտական հանդեսը կամ ժողովածուն ունի աշխատավայր նշելու հնարավորություն:

2.9. Աղյուսակ 1-ի 10-րդ և 11-րդ կետերով սահմանված աշխատանքները հաշվառելու համար ԵՊՀ ԻՄ հիմնական աշխատողը ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղարին է ներկայացնում ատենախոսության սեղմագիրը, ատենախոսությունը պաշտպանած հայցորդի(ասպիրանտի)՝ գիտությունների թեկնածուի դիպլոմի պատճենը և համապատասխան տեղեկանք ՄՌԿ բաժնից:

2.10. ԵՊՀ ԻՄ գիտական քարտուղարը հավաստիանալով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության մեջ, կազմում և ԵՊՀ ԻՄ տնօրենի հաստատմանն է ներկայացնում ԵՊՀ ԻՄ աշխատողներին լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

2.11. Աղյուսակ 1-ում սահմանված աշխատանքների կատարման համար ԵՊՀ ԻՄ աշխատողին լրավճարը վճարվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա ընթացքում:

3. ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՏԵՍԱԿՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՎՃԱՐՎՈՂ ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. ԵՊՀ ԻՄ աշխատողներին ուսումնամեթոդական գործունեության որոշ տեսակների կատարման համար վճարվում են լրավճարներ՝ համաձայն Աղյուսակ 2-ի.

Աղյուսակ 2

Հ/Հ	ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ (ԱՇԽԱՏԱՆՔԻ) ՆԿԱՐԱԳԻՐԸ	ՄԻԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ (D-Ն) (ՀՀ ԴՐԱՄ)	ՄԵԿ ԱՇԽԱՏՈՂԻՆ ՀԱՍԱՆԵԼԻՔ ԼՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ
1.	ԵՊՀ ԻՄ գիտական խորհրդով երաշխավորված դասախոսությունների կամ ուսումնական ձեռնարկի	1 կրեդիտին համարժեք նյութի արժեքը՝ 30000	D-ի և կրեդիտների արտադրյալը բաժանվում է (համա)հեղինակների թվին

	տեղադրում ԵՊՀ ԻՄ համացանցային պորտալում		
2.	ՀՀ ԿԳՆ կողմից երաշխավորված բուհական դասագրքի հրատարակում	200000	D-ն բաժանվում է ՀՀ քաղաքացի (համա)հեղինակ-ների թվին
3.	ԵՊՀ ԻՄ-ում օտարալեզու կրթական մոդուլի ներդնում	1 կրեդիտին համարժեք արժեքը՝ 30000	D-ի և կրեդիտների արտադրյալը բաժանվում է (համա)հեղինակների թվին
4.	ԵՊՀ ԻՄ աշակերտական օլիմպիադաների կազմակեր-պում	Յուրաքանչյուր առարկայից մեկ օլիմպիա-դայի արժեքը՝ 50000 գումարած յուրաքանչյուր մասնակցի համար՝ 500	D-ն ֆակուլտետի դեկանի զեկուցագրի համաձայն բաժանվում է կազմակերպիչների միջև
5.	ԵՊՀ ԻՄ ուսանողական օլիմպիադաների կազմակեր-պում	Յուրաքանչյուր առարկայից մեկ օլիմպիա-դայի արժեքը՝ 70000 գումարած յուրաքանչյուր մասնակցի համար՝ 700	D-ն ֆակուլտետի դեկանի զեկուցագրի համաձայն բաժանվում է կազմակերպիչների միջև
6.	Հանրապետական օլիմպիադա-	Յուրաքանչյուր	D-ն ֆակուլտետի դեկանի

	ների կազմակերպում	առարկայից մեկ օլիմպիա-դայի արժեքը՝ 70000 գումարած յուրաքանչյուր մասնակցի համար՝ 700	զեկուցագրի համաձայն բաժանվում է կազմակերպիչների միջև
7.	Միջազգային առարկայական ուսանողական օլիմպի-ադաներին ԵՊՀ ԻՄ ուսանողների նախապատրաս-տում և մարզում	Մեկ առարկայի համար՝ 300000	D-ն ֆակուլտետի դեկանի զեկուցագրի համաձայն բաժանվում է մարզիչների միջև
8.	ՈԻԳԸ-ի գիտական ղեկավարում	մինչև 100000	D-ն վճարվում է ԵՊՀ ԻՄ-ի ՈԻԳԸ-ի գիտական խորհրդատուին՝ ՈԻԳԸ ղեկավարման տարեկան հաշվետվությունը սահմանված կարգով հավանության արժանանալու դեպքում
9.	ԵՊՀ ՈԻԳԸ-ի տարեկան գիտաժողովի նյութերի ժողովածուում ԵՊՀ ԻՄ ուսանողի կողմից հրապարակ-ված աշխատանքի ղեկավարում	Մեկ աշխատանքը՝ 15000	Աշխատողին վճարվում է D-ի և ղեկավարած աշխատանքների քանակի արտադրյալը

3.2. Աղյուսակ 2-ի 1-ին կետերով սահմանված աշխատանքների կատարման համար հատկացվող լրավճարները վճարվում են, եթե նշված դասախոսությունները տեղադրվել են ԵՊՀ ուսուցման կառավարման համակարգում(e-learning.ysu.am)՝ համաձայն սույն կարգի հավելված 1-ի և համակարգում տեղադրվող դասախոսությունների բովանդակային համապատասխանությունը հաստատել է տվյալ ամբիոնի վարիչը:

3.3. Աղյուսակ 2-ի 2-րդ կետերով սահմանված աշխատանքների կատարման համար հատկացվող լրավճարները վճարվում են, եթե այդ աշխատանքները մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 31-ը մուտքագրվել են ԵՊՀ ԻՄ աշխատողների հաշվետվությունների էլեկտրոնային շտեմարանում (www.intranet.ysu.am) (մինչև էլեկտրոնային շտեմարանի գործարկումը աշխատանքները ներկայացնել ԵՊՀ ԻՄ-ի գիտական քարտուղարին):

3.4. Աղյուսակ 2-ի 3-8-րդ կետերով սահմանված աշխատանքները հաշվառելու համար աշխատողը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 15-ը ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչության պետին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ ֆակուլտետի դեկանի զեկուցագիրը՝ կցելով համապատասխան հիմքերը: Աղյուսակ 2-ի 8-րդ կետի հավաստման հիմք է հանդիսանում ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ գիտական խորհրդատուի հաշվետվությունը՝ ստորագրված ԵՊՀ ԻՄ-ի ՈՒԳԸ գիտական խորհրդատուի և ՈՒԳԸ նախագահի կողմից:

3.5. Աղյուսակ 2-ի 1-9-րդ կետերով սահմանված գումարները վճարվում են միայն ԵՊՀ ԻՄ հիմնական աշխատողներին:

3.6. Աղյուսակ 2-ի 2-9-րդ կետերով սահմանված աշխատանքների կատարման համար, ԵՊՀ ԻՄ աշխատողին վճարվող լրավճարի տարեկան առավելագույն չափը չի կարող գերազանցել 300000 (երեք հարյուր հազար) ՀՀ դրամը:

3.7. ԵՊՀ ԻՄ ուսումնամեթոդական վարչությունը հավաստիանալով ներկայացված փաստաթղթերի համապատասխանության մեջ, կազմում և ԵՊՀ

ԻՄ տնօրենի հաստատմանն է ներկայացնում ԵՊՀ ԻՄ աշխատողներին լրավճար տրամադրելու մասին հրամանի նախագիծը:

3.8. Աղյուսակ 2-ի 2-9-րդ կետերով սահմանված աշխատանքների կատարման համար ԵՊՀ ԻՄ աշխատողին լրավճարը վճարվում է յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա ընթացքում, իսկ 1-ին կետով սահմանված աշխատանքների կատարման համար՝ յուրաքանչյուր տարվա փետրվար և սեպտեմբեր ամիսներին:

Հավելված 1

ԵՊՀ ուսուցման կառավարման համակարգի (e-learning.ysu.am) (այսուհետ ՈւԿՀ) կիրառմամբ դասախոսելու համար, դասախոսն այդ համակարգում առնվազն պետք է ունենա.

1. դասընթացի օրացուցային պլան,
2. յուրաքանչյուր շաբաթվա համար անհրաժեշտ մատուցվող նյութ(եր)ը՝ կցելով համապատասխան նկարագրությունները, ընդ որում՝

2.1. մատուցվող նյութ(եր)ը պետք է ունենա համակարգչային շարվածք (լուսանցքները բոլոր կողմերից (ձախից, աջից, վերևից, ներքևից)՝ 1.5 սմ, էջերը՝ համարակալված, վերնագրերը և տեքստը շարված 12 pt տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1.5),

2.2. նյութը A4 (210 մմ X 297մմ)՝ pdf ձևաչափով լինի,

2.3. նյութի առանձին բաժինների վերնագրերը պետք է գրվեն թավ (bold) և գլխատառերով։ Յուրաքանչյուր բաժին սկսվելով նոր էջից,

2.4. նյութում առկա նկարները, գծագրերը և աղյուսակները համարակալվում են և դրանց տրվում են անվանումներ (10pt տառաչափով),

3. դասավանդման ընթացքում տրվող առաջադրանքները, քննության հարցերը, վերջնաժամկետները և գնահատման չափորոշիչները,
4. դասընթացում անհրաժեշտ հղումներ (գրականության կամ այլ օժանդակ թվային ռեսուրսների վրա)։

ՈւԿՀ-ի միջոցով դասախոսը կարող է.

- մշտադիտարկել ուսանողների այցելությունները,
- հաղորդակցվել ուսանողների հետ,
- տրամադրել քննաշրջանի արդյունքները,
- փոփոխել, ավելացնել դասախոսությունների նյութեր։

ՈւԿՀ-ով կազմակերպվող դասախոսության նյութը ամբողջովին պետք է ընդգրկի դասընթացի բոլոր թեմաները՝ հնարավորություն տալով ուսանողին այդ նյութի սահմաններում **հավակնել առավելագույն գնահատականի։**

ՈւԿՀ-ով դասախոսող դասախոսը և համապատասխան ամբիոնի վարիչը պատասխանատու են այդ դասընթացի նյութի հստակ և անթերի ներկայացման, կատարման և բովանդակային համապատասխանության համար։